

ԱՆՎՃԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ IDBANK-ի ՀԵՏ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հրաշալի հնարավորություն 2-րդ և 3-րդ կուրսի ուսանողների համար՝ մասնակցելու IDBank-ի անվճար ուսուցման ծրագրին բանկային ոլորտում համապատասխան փորձի ձեռքբերման նպատակով:

Յուրաքանչյուր ուսանողի առաջնային մտահոգությունը աշխատաշուկայի պահանջներին բավարարող աշխատանքային փորձի ձեռքբերումն է: Փորձի կուտակումը պետք է սկսել դեռևս ուսումնառության ժամանակ:

IDBank-ի **հետ ուսանողները** հնարավորություն կունենան կիրառել իրենց գիտելիքները վաճառքի, սպասարկման ոլորտներում, ինչպես նաև ձեռք բերել նոր գիտելիքներ և հմտություններ բանկային գործում:

Ուսուցման տևողություն	մինչև 2 ամիս
Ուսուցման անցկացման վայր	«Այրի Բանկ» ՓԲԸ մասնաճյուղեր
Ուսուցման մեկնարկ	Հնարավորինս շուտ
Հայտարարության սկիզբ	Հունիսի 14, 2019թ.
Հայտարարության ավարտ	Հունիսի 20, 2019թ.

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է՝

- լինել բակալավրի 2-րդ կամ 3-րդ կուրսի ուսանող,
- ունենալ լավ առաջադիմություն,
- ունենալ տնտեսագիտական/ֆինանսական մասնագիտացում,
- տիրապետել օտար լեզուներին /ռուսերեն, անգլերեն/,
- ունենալ հաղորդակցման գերազանց հմտություններ,
- և **ամենակարևորը՝** լինել նախաձեռնող, ստեղծագործական ու նորարար գաղափարներով և էնտուզիազմով լի ուսանող:

Եվ այսպես, եթե մոտիվացված ու նպատակասլաց ես, համապատասխանում ես վերոնշյալ չափանիշներին և ցանկանում ես ձեռք բերել համապատասխան փորձ այս ոլորտում, ապա օգտագործիր հնարավորությունը:

Ուսուցմանը մասնակցելու համար անհրաժեշտ է լրացնել «Այրի Բանկ»-ի **դիմում-հայտը** և/կամ ինքնակենսագրականի (CV) հետ միասին ուղարկել hr@idbank.am հասցեին՝ նամակի թեմա (subject) դաշտում պարտադիր նշելով ծրագրի անվանումը՝ **«ԱՆՎՃԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ IDBANK-ի ՀԵՏ»** :

Նշենք նաև, որ ստացված յուրաքանչյուր դիմում-հայտ մանրամասն կուսումնասիրվի ՄՌԿ վարչության կողմից, և հաշվի առնելով դիմորդի համապատասխանությունը Ծրագրի պահանջներին՝ ընտրված թեկնածուները կիրավիրվեն թեստավորման և հարցազրույցի:

- #միացիրԱյրիԲանկին
- #արիԱյրիԲանկ
- #ԱյրիԲանկթիմ